ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013թ. դեկտեմբերի 10-ին Շաղափ համայնքում տեղի ունեցավ հանրային լսումներ: Լսումների մասնակցում էին համայնքի ղեկավար Կ. Կարապետյանը գյուղապետարանի աշխատակազմի անդամներ, ավագանու անդամներ, մանկավարժական կոլեկտիվի անդամներ և համայնքի այլ բնակիչներ:

Օրակարգ

Շաղափ համայնքի ղեկավարի 2013թ. հուլիսից մինչև 2013թ. դեկտեմբերի 10-ը կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Նշվեց ,որ վերը նշված ժամանակահատվածում համայնքի բյուջեն կատարվել է 50% -ով: Նշեց ժամանակահատվածում համայնքում կատարվել է

աղբահանություն 350,0 հազար դրամ

տրամադրվել է օգնություն 200,0 հազար դրամ

ջրագծի նորոգում 450,0 հազար դրամ

նախատեսվել է մինչև տարեվերջ կատարել ևս

աղբահանություն 50,0 հազար դրամ

ջրագծի նորոգում 50,0 հազար դրամ

անապահով ընտանիքներին տրամադրել օգնություն 30,0 հազար դրամ

Համայնքի հիմնախնդիրներից է համարվում խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնական վերանորոգում, մշակույթի տան հիմնական վերնորոգումը և մանկապարտեզի վերանորոգումը:

Արտահայտվեցին ավագանու անդամներ Ա. Շահինյանը և Ա. Պետրոսյանը:

Որոշվեց հավանություն տալ համայնքի ղեկավարի և աշխատակազմի 2013թ. հուլիսից մինև 2013թ. դեկտեմբերի 10-ը կատարած աշխատանքները և պարտավորեցնել , որպեսզի տարեվերջին բյուջեի կատարողականը գերազանցի 100%:

Շաղափ համայնքի ղեկավար Կ.Կարապետյան